

7. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարում

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմաէներգիա մատակարարող ՀՀ ԱՎԾ-ուն հաշվառված կազմակերպություններում առկա 289 կաթսայատներից 2001թ. գործել են 17-ը, որից 11-ը՝ Երևան քաղաքում: Ամփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմաէներգիա արտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմաէներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 17 կաթսայատների համակարգում գործել են 39 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 1315 Գկալ/ժ (1 Գկալ=10⁹ կալ): 2001թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմաէներգիայի արտադրության համար օգտագործվել է 48.3 մլն. խոր. մ գազ, այդ թվում Երևանում՝ 37.9 մլն. խոր. մ:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 913.3 կմ, որի 32.9%-ը փոխարինման կարիք ունի, 28.9%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 53.0 կմ:


2001թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 777.6 հազ. Գկալ ջերմաէներգիա, որից Երևան քաղաքում՝ 617.2 հազ. Գկալ: Ջերմաէներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 139.0 հազ. Գկալ կամ 17.9%, Երևան քաղաքում, համապատասխանաբար՝ 102.5 հազ. Գկալ և 16.6%:

Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիայի քանակը, 2001թ.

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիան, Գկալ	% -ով փաստացի ստացված ջերմաէներգիայի ընդհանուր ծավալից		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	636114	47.7	8.3	44.0
այդ թվում՝ ք.Երևան	514655	40.5	7.0	52.5

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմաէներգիա է մատակարարվել Երևան, Գյումրի, Հրազդան, Սևան և Ջերմուկ քաղաքներում:

Քաղաքներում բնակչությանը տրված ջերմաէներգիայի քանակը, 2001թ. (%-ով ընդհանուրից)



2001թ. ընթացքում ջեռուցվել է 1632 բազմաբնակարան շենք և 699 բնակելի տուն: Ջեռուցված հինգ և ավելի հարկանի շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 68.9%-ը, Երևան քաղաքում՝ 96.3%-ը: Բազմաբնակարան շենքերում ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 2548.7 հազ. քառ. մ, որից՝ 1961.4 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2001թ. հանրապետությունում ջերմաէներգիա արտադրող և մատակարարող գործող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 1850.2 մլն. դրամ: Մուտքերը պետական և համայնքային բյուջեներից կազմել են 190.4 մլն. դրամ: Ջերմաէներգիայի իրացումից ստացված փաստացի եկամուտները կազմել են 1869.6 մլն. դրամ, որից բնակչությունից՝ 717.4 մլն. դրամ կամ 38.4%:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 3301.8 մլն. դրամ: Ըստ առանձին հոդվածների, ծախսերը ներկայացնում են հետևյալ պատկերը՝ 85.7%՝ նյութական ծախսեր, 1.1%՝ ոչ նյութական ծառայությունների վճարումներ, 7.3%՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, 2.2%՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ, մնացածը՝ այլ բնույթի:

Հանրապետությունում ջերմաէներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 16535.0 մլն. դրամ պարտք, որից բնակչությունից՝ 5566.4 մլն. դրամ կամ 33.7%, իսկ 2001թ.՝ 4319.8 մլն. դրամ, որից բնակչությունից՝ 1658.3 մլն. դրամ կամ 38.4%: Տարիների ընթացքում ջերմաէներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 75.4%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին: 2001թ. այդ ցուցանիշը կազմել է 78.4%:

Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարում, 1991-2001թթ.

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Հանրապետությունում սպառողներիին բաց թողնված ջերմաէներգիան, հազ. Գկալ	9697.6	2574.1	840.5	821.5	1040.0	840.4	965.6	1041.8	794.7	990.3	636.1
այդ թվում											
բնակչությանը	2666.4	353.5	308.4	363.4	577.7	492.4	474.3	574.5	383.8	515.8	303.2
կոմունալ-կենցաղային կարիքների համար	3531.4	302.8	73.7	88.5	89.0	43.2	150.9	53.9	54.5	62.7	52.7
արտադրական կարիքների համար	3499.8	1917.8	458.4	369.6	373.3	304.8	340.4	413.4	356.4	411.8	280.2